ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա սեպտեմբերի 12-ի կայացած նիստի

Օրակարգ

1. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի նոր առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման քննարկում:
2. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկում:
3. Բակալավր և մագիստրատուրա կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի նոր առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման մասին հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները ամբիոն ներկայացնել մինչև ս.թ սեպտեմբերի 15-ը և կայանալիք նիստում հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: Կարևորվեց նոր առարկայական նկարագրերում

վերջնարդյունքների ճիշտ ձևակերպումը ՄԿԾ-երին համապատասխան, մասնավորապես շեշտադրելով մասնագիտական գիտելիքի և իմացության, գործնական մասնագիտական կարողությունների և ընդհանրական/փոխանցելի կարողությունների անհրաժեշտությունը: Նշվեց նաև առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների՝ ըստ սահմանված ժամկետի Google classroom տեղադրելու անհրաժեշտությունը համապատասխան պանակներում:

2.Լսեցին – Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – Ամբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը ներկայացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաները քննարկված են գիտական ղեկավարների հետ, ովքեր պատասխանատվություն են կրում ընտրված թեմաների շրջանակներում իրականացվող պատշաճ հետազոտությունների իրականացման, ինչպես նաև՝ կրկնություններից : Իսկ ինչ վերաբերվում է ուսանողների կողմից թեմաների ընտրության հարցին, նշվեց որ, այդ նպատակով Google classroom համակարգում ստեղծվել են էլեկտրոնային հարթակներ, որպեսզի դասախոսները և ուսանողները հնարավորություն ունենային միմյանց հետ հանդիպելու և քննարկելու թեմաները՝ մագիստրատուրա բաժնում, ինչ վերաբերվում է ավարտական աշխատանքների թեմաների ընտրությանը, դրանք ևս ամբիոնի մասնագետը առցանց ներկայացրել է ուսանողներին միայն այն տարբերությամբ, որ այս տարի գիտական ղեկավարները նշվել են ցանկում

:**3.Լսեցին** - Բակալավր և մագիստրատուրա կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Գրիգորյանը:

Որոշեցին_– Ա. Գրիգորյանը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում պլանավորվող պրակտիկաների իրականացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները: Ա. Գրիգորյանի կողմից նշվեց պրակտիկաների իրականացման կոնկրետ ժամանակացույց, նշվեց նաև պրակտիկաների մեթոդիստների, հոգեբանի և մանակվարժների անունները: Յուրաքանչյուր պրակտիկայի իրականացման համար պատասխանատու է պրակտիկայի ղեկավարի գլխավորությամբ մեթոդիստը, նրան կցված է հոգեբան և մանկավարժ: Պրակտիկա են մեկնում բակալավր 3-րդ, հեռակա 4-րդ (Հոկտեմբերի 6-ից -նոյեմբերի 17-ը), մագիստրատուրա առաջին կուրսի (Հոկտեմբերի 20-ից – նոյեմբերի 10-ը) ինչպես նաև հեռակա 5-րդ կուրսի (4 շաբաթ տևողությամբ, սկիզբը՝ հոկտեմբեր 15) ուսանողները: Նշվեց նաև, որ նախքան պրակտիկաների սկսվելը կազմակերպվելու են կոնֆերանսներ և աշխատանքները վերահսկելու և իրականացնելու նպատակով բացվելու են համապատասխան հարթակներ:

4. Լսեցին - Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկման հարցեր:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը:

Որոշեցին_– Ս. Գրիգորյանը նշեց, որ յուրաքանչյուր ուսանող պետք է կցված լինի դասավանդվող առարկաների հարթակներին: Լրացված պետք է լինեն էլեկտրոնային մատյաններում ուսանողների անուն ազգանունները:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա սեպտեմբերի 30-ի կայացած նիստի

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկում:
2. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մեդալաշնորհման ամբիոնի կողմից առաջադրվող թեկնածուների քննարկման հարցը
3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** – Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկում:

   Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը Լ.Աղլոյանը:

Որոշեցին – Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից մանրամասն քննարկվեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների բոլոր թեմաները: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվեց որոշ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների վերնագրեր հստակեցումներ: Առաջարկվեց նաև որոշ վերնագրեր վերաձևակերպել:

2.Լսեցին – 2. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մեդալաշնորհման ամբիոնի կողմից առաջադրվող թեկնածուների քննարկման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ.Հովյանը, Մ. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – Ամբիոնի վարիչի առաջարկով և ամբողջ պրոֆեսորադասախոսական կազմի միասնական որոշման արդյունքում որոշվեց, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից առաջադրել մեդալների՝ Ս.Փալիկյանի և Գ.Հովյանի թեկնածությունը:

Ընթացիկ հարցեր.

Քննարկվեց նաև մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման ուսանող Մադլեն Ենոքի Մինասյանի և <<Արտթերապիա>> մասնագիտացման ուսանող Արփինե Սամվելի Առաքելյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021-2022 ուստարվա դասաբաշխմանը համապատասխան վերոնշյալ ուսանողների մագիստրոսական թեզի ղեկավար էր Աննա Չարչյանը, իսկ ներկայումս երկրից բացակայելու պատճառով ազատված է աշխատանքից : Ուստի որոշվեց վերոնշյալ մագիստրոսների թեզերի ղեկավարման և ավարտին հասցնելու աշխատանքը վերաբաշխման դասաժամերին համապատսխան իրականացնեն դասախոսներ մ.գ.թ., Է. Թադևոսյանը /ուսանող՝Մադլեն Ենոքի Մինասյան/ և Տ. Ղազարյանը /ուսանող՝Արփինե Սամվելի Առաքելյան/:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի
2022-2023 ուս. տարվա սեպտեմբերի 30-ին կայացած
թիվ 2 նիստի անձանագրությունից

Լսեցին- Մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման ուսանող Մաղլեն Ենոքի Մինասյանի և <<Արտթերապիա>> մասնագիտացման ուսանող Արփինե Սամվելի Առաքելյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Է. Թադևոսյանը:

Որոշեցին- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021-2022 ուստարվա դասաշաշխմանը համապատասխան վերոնշյալ ուսանողների մագիստրոսական թեզի ղեկավար էր Աննա Չարչյանը, իսկ ներկայումս երկրից բացակայելու պատճառով ազատված է աշխատանքից : Ուստի որոշվեց վերոնշյալ մագիստրոսների թեզերի ղեկավարման և ավարտին հասցնելու աշխատանքը վերաբաշխման դասաժամերին համապատասխան իրականացնեն դասախոսներ մ.գ.թ., Է. Թադևոսյանը / ուսանող՝ Մաղլեն Ենոքի Մինասյան/ և Տ. Ղազարյանը/ ուսանող՝ Արփինե Սամվելի Առաքելյան/ :

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի
2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ի կայացած նիստի

Օրակարգ

6. Ամբիոնի հայցորդների հաշվետվության քննարկում և հաստատում:
7. Ամփոփիչ ատեստավորման վերահանձմանը մասնակցելու թույլտվություն ստացած «Լոգոպեդիա» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական աշխատանքի նոր կամ նախկին թեմայի քննարկում և հաստատում:
8. Ամբիոնի 2022 թ. տարեկան հաշվետվության հաստատում:
9. Մագիստրոսական թեզերի վերաբերյալ գիտական ղեկավարների կողմից հաշվետվություն ներկայացնելու մասին:
10. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին –** Ամբիոնի հայցորդների հաշվետվության ներկայացման և ատեստավորման մասին հարցը:

Ամբիոնի հայցորդներ Գ.Ա. Մամյանը, Ք.Ա. Խառատյանը, Ա.Հ.Ասլանյանը, /գիտ. ղեկավար մ.գ.թ., դոցենտ Գ. Հովյան/, Ա.Ռ. Մանուկյանը /գիտ. ղեկավար մ.գ.դ., դոցենտ Ժ. Պայլոզյան/, Մ. Ալեքսանյանը /գիտ. ղեկավար մ.գ.թ., դոցենտ Մ. Հարությունյան/, ինչպես նաև Գ.Լ. Հակոբյանը /գիտական ղեկավար մ.գ.թ., դոցենտ Ա. Կիրակոսյան/ ներկայացրեցին 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ իրենց հաշվետվությանները:

/Հաշվետվությունները կցված են արձանագրությանը/:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը, Մ. Հարությունյանը:

Որոշեցին – Ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդներ Ք.Ա. Խառատյանին, Ա.Ռ. Մանուկյանին, Մ. Ալեքսանյանին, Գ.Ա. Մամյանին, Ա.Հ.Ասլանյանին և Գ.Լ. Հակոբյանին:

2.Լսեցին – Ամփոփիչ ատեստավորման վերահանձմանը մասնակցելու թույլտվություն ստացած «Լոգոպեդիա» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական աշխատանքի նոր կամ նախկին թեմայի քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ.Հովյանը, Մ. Հարությունյանը, Ս. Կարապետյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – «Լոգոպեդիա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեսավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտ Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական աշխատանքի նախկին թեման եղել է «Մանկավարժահոգեբանական աջակցության մեթոդները դիզարտրիա ունեցող երեխաների հետ տարվողլոգոպեդական աշխատանքում» խորագրով: Ամբիոնի առաջարկով՝ համաձայնեցնելով գիտական ղեկավար Զ. Հարությունյանի հետ, որոշվեց հաստատել նախկին թեման: Ամբիոնի վարիչը գիտական ղեկավարին հորդորեց լինել հետևողական ուսանողի կատարած աշխատանքներին և կրկին խնդրահարույց դեպք նկատելու դեպքում անմիջապես զեկուցագրի տեսքով տեղեկացնել ամբիոն:

3. Լսեցին -Ամբիոնի 2022 թ. տարեկան հաշվետվության հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – Ս. Գրիգորյանը ներկայացրեց 2022 թ. ամբիոնի կատարված աշխատանքները, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները, ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովումը և մշտադիտարկումը:

4. Լսեցին - Մագիստրոսական թեզերի վերաբերյալ գիտական ղեկավարների կողմից հաշվետվություն ներկայացնելու մասին:

Արտահայտվեցին – Ս.Գրիգորյանը, Գ.Հովյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի վերաբերյալ հաշվետվությունների վերջնաժամկետ սահմանել մինչև դեկտեմբերի 15-ը:

5. Ընթացիկ հարցեր

Լսեցին - Ուսանողների հաճախումների հարցի վերաբերյալ քննարկում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Կարապետյանը, Ա . Կիրակոսյանը:

Որոշեցին – Աբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը նշոց, որ ամբիոնի մասնագետ Ա. Օհանյանը Google Classroom էլ. հարթակի բոլոր դասընթացներում ստեղծել է էլեկտրոնային մատյաններ և հորդորեց դասախոսներին որպեսզի լինեն հետևողական և պարտադիր իրականացնեն ուսոնղների հաճախումների հաշվառում:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

Քաղվածք

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ի կայացած նիստի

Լսեցին – Ամփոփիչ ատեստավորման վերահանձմանը մասնակցելու թույլտվություն ստացած «Լոգոպեդիա» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական աշխատանքի նոր կամ նախկին թեմայի քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ.Հովյանը, Մ. Հարությունյանը, Ս. Կարապետյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը:

Որոշեցին – Ամբիոնի առաջարկով՝ համաձայնեցնելով գիտական ղեկավար Զ. Հարությունյանի հետ, որոշվեց «Լոգոպեդիա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեսավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտ Անի Վոլոդիայի Դավթյանի նախկին թեման հաստատել:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Գրիգորի Արտաշեսի Մամյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Կարապետյանը, Գ. Հովյանը:

Որոշեցին- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Գրիգորի Արտաշեսի Մամյանին:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Աննա Հրանտի Ասլանյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Գրիգորյանը:

Որոշեցին- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Աննա Հրանտի Ասլանյանին:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի
2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած
թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Անի Ռուբենի Մանուկյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Կարապետյանը, Ա. Գրիգորյանը:

Որոշեցին- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Անի Ռուբենի Մանուկյանին:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի
2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած
թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Գրետա Լյովայի Հակոբյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ա. Կիրակոսյանը:

Որոշեցին- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Գրետա Լյովայի Հակոբյանին:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Մերի Ալեքսանյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Մ. Հարությունյանը:

Որոշեցին- ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդ Գրետա Լյովայի Հակոբյանին:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 3 նիստի անձանագրությունից

Լսեցին- Ամբիոնի հայցորդ Սահակ Խաչատրյանի 2022թ. գիտահետազոտական գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը:

Որոշեցին- հայցորդ Սահակ Խաչատրյանին չատեստավորել՝ գիտահետազոտական աշխատանք չիրականացնելու, ատենախոսական թեմայի ընտրության հարցում նախաձեռնություն չցուցաբերելու պատճառով:

Ամբիոնի նիստի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը,Դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա փետրվարի 3-ի կայացած նիստի

Օրակարգ

1. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի նոր ՄԿԾ-ների, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, առարկայական փաթեթների հաստատում
2. Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում
3. Առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի 2-րդ կիսաամյակի կուրսային աշխատանքների քննարկում և հաստատում:
4. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում:
5. Հեռակա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

<u>1.Լսեցին</u> – 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի նոր ՄԿԾ-ների, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, առարկայական փաթեթների հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Զ. Հարությունյանը, Ս. Փալիկյանը, Ժ. Պայլոզյանը:

Որոշեցին – Նշվեց, որ այս ուսումնական տարվա 2–րդ կիսամյակի բոլոր տեղադրվելիք առարկաների առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները պետք է համապատասխանեն ՀՊՄՀ–ի կողմից ընդունելի չափանիշներին: Շեշվեց, որ հատկապես

կարևորվում են դասավանդվող առարկաների նպատակների և վերջնարդյունքների հստակ ձևակերպումների առկայությունը: Զ. Հարությունյանը նշեց նաև, որ մագիստրատուրայում արտթերապիա մասնագիտությամբ դասավանդվող որոշ առարկաների նպատակներն ու որոշ առարկաների վերջնարդյունքներ և նպատակադրումներ հստակ ձևակերպված չեն և կարիք կա վերանայման: Որոշվեց նաև, որ եթե կլինեն առաջարկներ դասախոսների կողմից այս թեմայի վերաբերյալ աշխատանքները բարելավելու նպատակով անպայման հաշվի կառնվեն: Քննարկվեց և որոշվեց նաև Զ. Հարությունյանի հետ հանդիպում–քննարկումներ իրականացնել առավել բարելավվելու քննարկվող հարցերի իրականացման ընթացքը:

2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում դասավանդող դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ԱՈՒՄՓ ձևաչափի շրջանակներում կատարած աշխատանքի արդյունքները, որոնք քննարկվեցին ամբիոնում:

Ամբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը դասախոսներին հորդորեց տեղադրել դասավանդվող բոլոր դասընթացների էջերում անհրաժեշտ նյութերը և խնդրեց նաև ուշադրություն դարձնել այն փաստին, որ առարկայական նկարագրերերը պարտադիր պետք է լինեն նոր ձևաչափով:

<u>2.Լսեցին</u> -Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ա. Գրիգորյանը, Ժ. Պայլոզյանը:

Որոշեցին – Ամբիոնի դոցենտ, պրակտիկայի ղեկավար Ա. Գրիգորյանը ներկայացրեց առկա բակալավր 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի ժամանակացույցը, հաստատությունները և մեթոդիստներին: Նշեց որ փետրվարի 9-ից մեկնարկելու է 3–րդ կուրսի մանկավարժական պրակտիկան մինչև մայիսի 24–ը, իսկ 2–րդ կուրսի շարունակական պրակտիկան փետրվարի 15-ից մինչև մայիսի 24–ը: Հավելեց նաև, որ պրակտիկաների իրականացման համար նախատեսվում է իրականացնել կոնֆերանսներ:

3. Լսեցին - Առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը:

Որոշեցին – հաստատել <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 3-րդ կուրսի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաները:

4.Լսեցին – 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Գ. Հովյանը, Ս. Գրիգորյանը, Է. Թադևոսյանը:

Որոշեցին – Հաստատել Դասընթաց ուսանողի ընտրությամբ առարկաների վերաբերյալ հարցը, ճշգրտվեց կիսամյակային ԴԱՍ-ուսների քանակի, նրանց որպես դասավանդվող առարկաների անվանումների և բովանդակության հարցերը:

Որպես ընտրովի դասընթացներ հաստատել հետևյալ թեմաները.

Բաժին	**Կուրս**	**Առարկա**	**Դասախոսի Ազգանուն, անուն**
Լոգոպեդիա Ա.Բ.	3	**Ընտր/դաս (մասնագիտական) 1** Խոսքային խանգարում ունեցող երեխաների գնահատումը և ներառումը հանրակրթությունում	Գրիգորյան Գեղեցիկ
Լոգոպեդիա Ա.Բ.	4	**Ընտր/դաս (մասնագիտական) 3** Լոգոպեդական աշխատանքի կազմակերպումը առողջապահական համակարգում	Շաբոյան Մերի
Լոգոպեդիա Ա.Մ.	1	**Ընտր/դաս (3)** Դաունի համախտանիշ ունեցող երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները	Աղլոյան Լիլիթ
Լոգոպեդիա Ա.Մ.	1	**Ընտր/դաս (2)** Ստեղծագործական մտածողությունը զարգացնող մեթոդները լոգոպեդական	Թադևոսյան Էմիլյա

		աշխատանքում	
Լոգոպեդիա Ա.Մ.	1	**Ընտր/դաս (4)** Խոսքային խանգարումներ ունեցող անձանց նյարդահոգեկան ոլորտի առանձնահատկությունները և լոգոպեդական աշխատանքի ուղղությունները	Կիրակոսյան Արմինե
Լոգոպեդիա Ա.Մ.	1	**Ընտր/դաս (1)** Ժառանգական գործոնը խոսքի պաթոլոգիայում	Փալիկյան Սպարտակ
Արտթերապիա Ա. Մ.	1	**Ընտր/դաս (4)** Էրգոթերապևտիկ գործնական մոտեցումների կիրառումը արտթերապիայում	Հարությունյան Զարուհի
Արտթերապիա Ա. Մ.	1	**Ընտր/դաս (2)** Արտթերապիան զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատանքում	Փալիկյան Սպարտակ
Էրգոթերապիա Ա. Մ.	1	**Ընտր/դաս (4)** Էրգոթերապիան հոգեբուժության ոլորտում	Հարությունյան Մարիաննա
Էրգոթերապիա Ա. Մ.	1	**Ընտր/դաս (2)** Սոցիալական և ֆիզիկական հարմարեցումը նյարդաբանական խնդիրների ժամանակ	Հարությունյան Զարուհի
Լոգոպեդիա Ա.Մ	2	**Ընտր/դաս (2)** Տեսական և գործնական մոտեցումների վերլուծությունը լոգոպեդիայում	Հովյան Գոհար
Լոգոպեդիա Ա.Մ	2	**Ընտր/դաս (4)** Լոգոպեդական խարհրդատվություն	Պայլոզյան Ժաննա
Արտթերապիա Ա.Մ.	2	**Ընտր/դաս (2)** Պարաշարժողական թերապիա	Գրիգորյան Աստղիկ
Արտթերապիա Ա.Մ.	2	**Ընտր/դաս (4)** Բիբլիոթերապիա	Հայրապետյան Ալվինա
Էրգոթերապիա Ա. Մ.	2	**Ընտր/դաս (2)** Էրգոթերապիան ներառական կրթության համակարգում	Հարությունյան Զարուհի
Էրգոթերապիա Ա. Մ.	2	**Ընտր/դաս (4)** Վարքային և հուզակամային խնդիրների հաղթահարման	Հարությունյան Զարուհի

		էրգոթերապևտիկ գործնական մոտեցումներ	

5.<u>Լսեցին</u> - Հեռակա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում:

Արտահայտվեցին – Գ. Հովյանը, Ս. Գրիգորյանը:

Որոշեցին - Հաստատել հեռակա բաժնի քննական տոմսերը:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա փետրվարի 22-ի կայացած նիստի

Օրակարգ

7. Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի Թալին Գալֆյան Աշիքեանի թեկնածուական թեզի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:
8. Լոգոպեդների շարունակական կրթության վերաբերյալ վերապատրաստման նպատակով մոդուլի ներդրման հարցի քննարկում և հաստատում:
9. Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում և հաստատում:
10. Ընթացիկ հարցեր:

<u>1.Լսեցին</u> – Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Թալին Գալֆյան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց» խորագրով թեկնածուական թեզի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Գ.Կարապետյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Թալին Գալֆյան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես

լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց» խորագրով թեկնածուական թեզի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանին:

2.Լսեցին – Լոգոպեդների շարունակական կրթության վերաբերյալ վերապատրաստման նպատակով մոդուլի ներդրման հարցի քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Ս. Գրիգորյանը, Ս. Փալիկյանը, Գ. Հովյանը:

Որոշեցին – Կարևորելով լոգոպեդների շարունակական կրթության վերաբերյալ վերապատրաստման նպատակով մոդուլի ներդրումը ՀՀ-ում, նշվեց, որ լոգոպեդների վերապատրաստման հարցը պետք է կազմակերպի ՀՊՄՀ-ն և ոչ թե առանձին անհատներ կամ կազմակերպություններ, որոնք իրականացնում են վերապատրաստումներ և տալիս հավաստագրեր, սերտիֆիկատներ: Նշվեց նաև նախարարության կողմից համապատասխան լիցենզավորման թույլատրման հարցի կարևորությունը այս գործընթացում: Այս հարցի շուրջ նույնպես նիստի մասնակիցները համակարծիք էին և հաստատեցին լոգոպեդների շարունակական կրթության վերաբերյալ վերապատրաստման նպատակով մոդուլի ներդրման հարցը:

3.Լսեցին - Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին – Գ. Հովյանը, Ս. Գրիգորյանը:

Որոշեցին - Հաստատել առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի միջանկյալ և քննական քննական տոմսերը:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Ա. Օհանյան**

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2023թ. փետրվարի 22-ի թիվ 5 նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ՝ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ **Թալին Գալֆայան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց»** խորագրով թեկնածուական թեզի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Գ.Կարապետյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Թալին Գալֆայան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց» խորագրով թեկնածուական թեզի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանին:

Ամբիոնի 16 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2023թ. փետրվարի 22-ի թիվ 5 նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ՝ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ **Թալին Գալֆայան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց»** խորագրով թեկնածուական թեզի թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Գ.Կարապետյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Թալին Գալֆայան Աշիքեանի «Շարունակական կրթության հիմնահարցը որպես լոգոպեդի մասնագիտական որակավորման բարձրացման միջոց» խորագրով թեկնածուական թեզի թեման և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանին:

Ամբիոնի 16 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՕՀԱՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6,7,8,9,10

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի

2022-2023 ուս. տարվա ապրիլի 10-ից 14-ը կայացած նիստերի

Օրակարգ

1. 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանություն:
2. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին- 2022-2023 ուս. տարվա առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանության հարցը:

Ապրիլի 10-ից 14-ը ընկած ժամանակաշրջանում, ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում տեղի ունեցան առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունները, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են Լոգոպեդիա բաժնի բակալավրիատի 31 և մագիստրատուրայի 18 ուսանողներ, էրգոթերապիա բաժնի 6 և արտթերապիա բաժնի 3-ը մագիստրոսներ: Ընդհանուր առմամբ՝ 58 ուսանողներ:

Ամբիոնում տեղի ունեցած առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանություններն, ընդհանուր առմամբ իրականացվել են սահմանված կարգին և ներկայացվող պահանջներին համապատասխան՝ բացառությամբ մի քանի դեպքերի, երբ քննարկումների ընթացքում առաջարկվել է կատարել անհրաժեշտ շտկումներ և ներկայացնել ամբիոն, մասնավորապես, Լոգոպեդիա բաժնի բակալավրիատի ուսանողներ՝ Պապոյան Մերի,

Սարիբեկյան Անի , որոշակի շտկումներ պիտի կատարեն ավարտական աշխատանքների բովանդակային և տեխնիկական ձևավորման հետ կապված և ավելի պատշաճ ներկայանալու առումով: Կատարված քննարկումների և դիտարկումների արդյունքում ամբիոնի կողմից առաջարկվել է կատարել բոլոր անհրաժեշտ փոփոխությունները և բոլոր աշխատանքները երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

Արտահայտվեցին-Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Կիրակոսյանը, Լ. Աղլոյանը, Ա. Գրիգորյանը, Է. Թադևոսյան, Ժ. Պայլոզյանը, Ն. Հունանյանը, Մ. Շաբոյանը:

Որոշեցին- Ներքոհիշյալ ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

2. ԼՍԵՑԻՆ՝ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս Գեղեցիկ Ֆրոնտիկի Գրիգորյանի «Հայախոս երեխաների հնչարտաբերման խանգարումների շտկման առանձնահատկությունները» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու և ֆակուլտետի խորհրդին ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Ս.Գ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջնորդել Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդին հրատարակման երաշխավորելու Գեղեցիկ Գրիգորյանի «Հայախոս երեխաների հնչարտաբերման խանգարումների շտկման առանձնահատկությունները» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ամբիոնի 16 անդամներից նիստին ներկա էին 15-ը, կողմ քվեարկեց 15-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11, 12

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի
2022-2023 ուս. տարվա մայիսի 5-ին և 8-ին կայացած նիստերի

Օրակարգ

1. 2022-2023 ուս. տարվա հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանություն:
2. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին- 2022-2023 ուս. տարվա հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանության հարցը:

Մայիսի 5-ին և 8-ին ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում տեղի ունեցան հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանությունները, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են Լոգոպեդիա բաժնի բակալավրիատի 27 ուսանողներ և երկտարեցի ուսանող՝ Անի Վալոդյայի Դավթյանը: Ընդհանուր առմամբ՝ 28 ուսանողներ:

Ամբիոնում տեղի ունեցած հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանություններն, ընդհանուր առմամբ իրականացվել են սահմանված կարգին և ներկայացվող պահանջներին համապատասխան՝ բացառությամբ մի քանի դեպքերի, երբ քննարկումների ընթացքում առաջարկվել է կատարել անհրաժեշտ շտկումներ և ներկայացնել ամբիոն: Ամբիոնի կողմից առաջարկվել է կատարել բոլոր անհրաժեշտ փոփոխությունները և բոլոր աշխատանքները երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

Արտահայտվեցին-Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Կիրակոսյանը, Լ. Ադլոյանը, Ա. Գրիգորյանը, Է. Թադևոսյան, Ժ. Պայլոզյանը, Ն. Հունանյանը, Մ. Շաբոյանը:

Որոշումին- Ներքոհիշյալ ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Ամբիոնի 16 անդամներից նիստին ներկա էին 10-ը, կողմ քվեարկեց 10-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահ՝ Ս. Գրիգորյան

Նիստի քարտուղար՝ Ա. Օհանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա հունիսի 5-ի կայացած արտահերթ նիստի

Օրակարգ

11. 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում:

1.Լսեցին – 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկման և Լոգոպեդիա բաժնի ուսանողուհի Էլիզաբեթ Սամվելի Սիմոնյանի ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու /գիտական ղեկավար՝ Տաթևիկ Աշոտի Ղազարյան/ հարցը:

Արտահայտվեցին – բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը:

Ամբիոնի վարիչը մշեց, որ ամփոփիչ ատեստավորման մասնակցած ուսանողներից գերազանց գնահատական է ստացել 15 ուսանող, որոնցից 3 կարմիր դիպլոմի հավակնորդ են:

Որոշեցին – 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքները համարել բավարար:

Լոգոպեդիա բաժնի ուսանողուհի Էլիզաբեթ Սամվելի Սիմոնյանին ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու /գիտական ղեկավար՝ Տաթևիկ Աշոտի Ղազարյան/ պատճառով ներկայացնել հեռացման:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Հ. Մինասյան**

ՔԱՂՎԱԾՔ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2023թ. հունիսի 5- ի թիվ 13 արտահերթ նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ՝ 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկման և Լոգոպեդիա բաժնի ուսանողուհի Էլիզաբեթ Սամվելի Սիմոնյանի ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու /գիտական ղեկավար՝ Տաթևիկ Աշոտի Ղազարյան/ հարցը։

Արտահայտվեցին – բ.գ.դ. պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ.Ռ.Հովյանը, կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար Ս.Փ.Փալիկյանը։։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Էլիզաբեթ Սամվելի Սիմոնյանին ամփոփիչ ատեստավորմանը չներկայանալու /գիտական ղեկավար՝ Տաթևիկ Աշոտի Ղազարյան/ պատճառով ներկայացնել հեռացման։

Ամբիոնի 16 անդամներից նիստին ներկա էին 13-ը, կողմ քվեարկեց 13-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022-2023 ուս. տարվա հունիսի 21-ի կայացած նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի գիտահետազոտական և որակի ապահովման գերակա ուղղությունների քննարկում:
2. Առարկայական նկարագրերի և ընտրովի դասընթացների վերանայման, նոր ձևաչափով ներկայացման հարցի քննարկում
   Ներամբիոնական աշխատանքների հանձնարարականներ:
3. 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:
4. Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսումնական գործընթացների կազմակերպում:
5. 2022-2023 ուսումնական տարում ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվություն:
6. Առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 2-րդ, 3-րդ կուրսերի 2022/2023 ուս. տարվա պրակտիկայի արդյունքների հաշվետվություն:
7. 2023-2024 ուս. տարվա դասախոսների հաստիքացուցակի քննարկում ծանրաբեռնվածության նախապատրաստում:
8. 2023-2024 ուսումնական տարում առկա մագիստրատուրա ընդունելության քննական տոմսերի քննարկման և հաստատման հարցը:

1.ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի գիտահետազոտական և որակի ապահովման գերակա ուղղությունների քննարկման հարցը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ Համալսարանը գտնվում է հավատարմագրման փուլում: Ամբիոնի որակի ապահովման և մշտադիտարկման պատասխանատու է Զ. Հարությունյանը: Վերաձևակեպվել են

կրթական նպատակները, վերջնարդյունքները, կրթական բովանդակությունը ըստ ելքային ադյունքների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս. Գրիգորյանը, մ.գ.թ. պրոֆեսոր Գ. Հովյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ամբիոնի գիտահետազոտական և որակի ապահովման գերակա ուղղությունների քննարկման հարցը ընդունել է գիտություն: Ամբիոնի որակի ապահովման և մշտադիտարկման պատասխանատու է Զ. Հարությունյանը կներկայացնի SWOT վերծություություն վերջարդյունքների վերաբերյալ:

2.ԼՍԵՑԻՆ – Առարկայական նկարագրերի և ընտրովի դասընթացների վերանայման, նոր ձևաչափով ներկայացման և ներամբիոնական աշխատանքների հանձնարարականների հարցերը:

Ամբիոնի վարիչը հորդորեց ամբիոնի ՊԴԱ անձնակազմին ավելի հետևողական լինել 2023-2024 ուսումնական տարում առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների պատրաստման, ինչպես նաև էլեկտրոնային հարթակում տեղադրման գործընթացում:

Ընտրովի դասընթացները անհրաժեշտ է փոփոխել: Առաջնորդվելով առողջապահության նախարարության, ԿԳՄՍ նախարարության կողմից «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության նոր փոփոխված և հաստատված օրենքներով և ուղեցուցներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մ.գ.թ. պրոֆեսոր Գ. Հովյանը, մ.գ.թ. դոցենտ Մ. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոն ներկայացնել նոր առարկայական նկարագրեր, որի հիման կկազմվի ծանրավռնվածությունը:

3. ԼՍԵՑԻՆ –2022-2023 ուսուումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

Ամբիոնի վարիչը ներկայացրեց 2022-2023 ուսուումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները : /Ատեստավորման արդյունքները կցված են արձանագրությանը/

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան, մ.գ.թ. պրոֆեսոր Գ. Հովյանը նշեց, որ վերլուծելով ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունները կարելի է գնահատել դրական: Առկա էին նաև որոշ աշխատանքներում վրիպումներ բովանդակային մասով պայմանավորված, որոնք լիարժեք չէին արտահայտվում վերնագրում: Այս կարգի վրիպումները անհարժեծտ է բացառել և շատ խիստ գնահատել:Նշվեց նաև ղեկավարների ներկայության անհրաժեշտությունը հրապարակային պաշտպանության ընթացքում: Գրախոսությունները պետք է ներկայացվեն այլ ամբիոններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մ.գ.թ. պրոֆեսոր Գ. Հովյանը, մ.գ.թ. դոցենտ Է. Թադևոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2022-2023 ուսուումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները համարել բավարար:

4. **ԼՍԵՑԻՆ** – Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսումնական գործընթացների կազմակերպում:

Ամբիոնի վարիչը նշեց, որ անհրաժեշտ է հետևողական տեղադրել միջանկյալների և ստուգարքների անհարժեշտ պահանջները էլեկտրոնային հարթակի համապատասխան պանակներում: Ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել ուսանողների բացակայություններին: Քննարկվեցին և հաստատվեցին քննական հարցաշարերը և տեմսերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆեսոր Ս. Գրիգորյանը, մ.գ.թ. դոցենտ Է. Թադևոսյանը, կ.գ.թ. պրոֆեսորի պ. Ս. Փալիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսումնական գործընթացների պատշաճ կազմակերպումը ընդունել ի գիտություն և հատատել հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսումնական հարցաշարերը և տոմսերը:

5. **ԼՍԵՑԻՆ** – 2022-2023 ուսումնական տարում ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվության հարցը:

Ամբիոնի վարիչը նշեց, որ ըստ հանձնարարականի դասախոսները ամբիոն են ներկայացրել 2023 թվականի ընթացքում իրենց կատարած հաշվետվությունները, որի համաձայն կազմվել է ամբիոնի տարեկան հաշվետվությունը: /Տարեկան հաշվետվությունը կցվել է համապատասխան թղթապանակում/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ա. Կիրակոսյանը, Լ. Ադլոյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Հայրապետյանը, Ն. Հունանյանը, Տ. Ղազարյանը, Մ. Շաբոյանը, Ս. Փալիկյանը, Զ. Հարությունյանը, Է. Թադրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել 2022-2023 ուստարվա ամբիոնի ՊԴԱ - ի և տարեկան հաշվետվությունները և աշխատանքները գնահատել դրական:

6. **ԼՍԵՑԻՆ –** Առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 2-րդ, 3-րդ կուրսերի 2022/2023 ուս. տարվա պրակտիկայի արդյունքների հաշվետվություն:

Պրակտիկայի ղեկավար Ա. Գրիգորյանը ներկայացրեց առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 2-րդ, 3-րդ կուրսերի 2022/2023 ուս. տարվա պրակտիկայի արդյունքների հաշվետվությունը: /Հաշվետվությունը կցված է արձանագրությանը/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ – առկա ուսուցման համակարգի <<Լոգոպեդիա>> մասնագիտացման 2-րդ, 3-րդ կուրսերի 2022/2023 ուս. տարվա պրակտիկայի արդյունքները համարել բավարար:

7. **ԼՍԵՑԻՆ –** 2023-2024 ուս. տարվա դասախոսների հաստիքացուցակի քննարկման և ծանրաբեռնվածության նախապատրաստման մասին հարցը:

Ս. Գրիգորյանը նշեց, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2023 - 2024 ուս. տարվա ուսումնական աշխատանքների ծավալային ժամաքանակը կազմում է 12645 ժամ / ներառում է նաև առկա և հեռակա բաժինների առաջին կուրսերի երթադրյալ ժամաքանակը/:

2023 - 2024 ուս. տարվա ուսումնական աշխատանքների ընթացքում երեք դասախոսների՝ Գ. Հովյանի, Մ. Շաբոյանի, Լ. Ադլոյանի ծանրաբեռնվածությունը նվազել է ևս մեկ դասախոսի՝ Ա. Կիրակոսյանի ծանրաբեռնվածությունը ավելացել է կազմելով 1 դրույք:

Վերջնական արդյուքում հնարավոր է Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն փոխանցվի մոտ 497 ժամ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ – Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ – Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

8. ԼՍԵՑԻՆ – 2023-2024 ուսումնական տարում առկա մագիստրատուրա «Լոգոպեդիա», «Էրգոթերապիա», «Արտթերապիա» մասնագիտացումների ընդունելության քննական տոմսերի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Գրիգորյանը, Գ. Հովյանը, Ս. Փալիկյանը, Զ. Հարությունյանը, Է. Թադրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել 2023-2024 ուսումնական տարվա առկա մագիստրատուրա «Լոգոպեդիա», «Էրգոթերապիա», «Արտթերապիա» մասնագիտացումների ընդունելության քննական տոմսերը:

Նիստի նախագահ՝ **Ս. Գրիգորյան**

Նիստի քարտուղար՝ **Հ. Մինասյան**

2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքներ

Առկա բակալավր

✓ *Լոգոպեդիա 16.05.2023 և 18.05.2023*

Մասնակցել են 31 ուսանող

Գերազանց գնահատական՝ 27 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ 16 ուսանող

Մագիստրատուրա

- ✓ *Էրգոթերապիա 30,05,2023*

Մասնակցել են 6 ուսանող

Գերազանց գնահատական՝ 3 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ 2 ուսանող

- ✓ *Արտթերապիա 23,05,2023*

Մասնակցել են 3 ուսանող

Գերազանց գնահատական՝ 3 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ 2 ուսանող

- ✓ *Լոգոպեդիա 25,05,2023*

Մասնակցել են 18 ուսանող

Գերազանց գնահատական՝ 18 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ 13 ուսանող

Հեռակա բակալավր

- ✓ *Լոգոպեդիա 01,06,2023*

Մասնակցել են 13 ուսանող

Գերազանց գնահատական՝ 7 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ 2 ուսանող

- ✓ *Լոգոպեդիա 02,06,2023*

Մասնակցել են 13 ուսանող և 1 երկտարեց

Գերազանց գնահատական՝- 8 ուսանող

Կարմիր դիպլոմ՝ - 1 ուսանող